

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ՆԱՐՅԵՐԸ
«ՆԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ» ՆԱԽԱԺՈՂՈՎՈՒՄ
 (Երևան, 15-20 սեպտեմբերի 2003 թ.)

Վերջին տարիներին հայագիտական այսքան բազմամարդ և բազմաբովանդակ գիտա-
 ժողով չէր եղել: Պեպության հովանավորությունը վայելող միջազգային համաժողովին ի-
 րենց մասնակցությունն էին բերել Հայաստանի և արտասահմանի բազմաթիվ գիտնական-
 ներ: Ծրագրում ներառված էր շուրջ 190 զեկուցում, որոնցից ավելի քան մեկ երրորդն ար-
 տասահմանյան հայագետների ներկայացրածն էր: ՆԳԻՊությունների Ազգային Ակադե-
 միայի և Երևանի Պետական Համալսարանի ջանքերով գումարված հայագիտական հա-
 մաժողովը կազմակերպվել էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ռու-
 սաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի, Երևանի Պետական Համալ-
 սարանի բարեկամների միության, «Զորք Իգնատիոս» հիմնադրամի և Գիտության և առա-
 ջադար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի հովանավորությամբ:

Զեկուցումները բաժանվել էին չորս մասնաճյուղերի (պատմություն, բանասիրություն,
 մշակույթ, Եկեղեցի), որոնցից յուրաքանչյուրը ղեկավարում էր առանձին հանձնախումբ՝
 բաղկացած ավյալ գիտաճյուղը ներկայացնող գիտնականներից: Նրանց խնդիրն էր՝ հա-
 մակարգել զեկուցումները և նախապարտադրել մասնաճյուղերի նիստերն ու հետևյալ կյոթ
 սեղանները.

- ա. Հայաստանը տարածաշրջանային զարգացումների համակարգում,
- բ. Հայկական ինքնության խնդիրը և հայապահպան գործունեությունը Մփյուռքում,
- գ. Կրթության հիմնախնդիրը Մփյուռքում և Հայաստանում:

Գիտաժողովի ընդգրկումն աննախընթաց էր: Այստեղ զեկուցումներ էին ներկայացված
 հայագիտության գրեթե բոլոր բնագավառներից և մեր ժողովրդի բազմադարյան պատմու-
 թյան բոլոր ժամանակահատվածներից: Ներկայացված զեկուցումների մեծաթվությունը,
 երբեմն էլ վերնագրերի անորոշությունն առանձին դեպքերում թույլ չեն տվել մասնաճյուղե-
 րի ղեկավարներին ճիշտ որոշել զեկուցման պարկանելությունը հայագիտության այս կամ
 այն բնագավառին և հաճախ բանասիրությանը վերաբերող զեկուցումը հայտնվել է պատ-
 մության (օր.՝ Մայա Ռափավայի, Զազա Ալեքսիձեի, Գևորգ Տեր-Վարդանյանի, Գաբրիելա
 Ուլոնոջյանի, Միշել Վան Հաբրուկի, Աննա Շիրինյանի), փիլիսոփայության ու Եկեղեցու
 բաժիններում, կամ էլ՝ ընդհակառակը, վերջիններին վերաբերող նյութերը տեղ են գտել
 մյուս մասնաճյուղերում: Նիստերը միաժամանակ տեղի էին ունենում ՆԳԻՊությունների
 Ազգային Ակադեմիայի, Երևանի Պետական Համալսարանի և Մաշտոցի անվան Մատեն-
 ադարանի նիստերի դահլիճներում, որոնց հեռավորությունը հաճախ խոչընդոտ էր դառ-
 նում և թույլ չէր տալիս մասնագետներին լսելու իրենց հետաքրքրող բոլոր զեկուցումները:

Համաժողովը բացվեց ՆԳԱ նախագահ Ֆ. Սարգսյանի ողջույնի և Ամենայն Հայոց
 Կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնության խոսքերով և ՆԳ նախագահ Ռ. Քոչարյանի, ինչպես
 նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի հղած ուղերձներով: Ողջույնի խոսք

ասաց և Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը: Տեղի ունեցավ երկու լիագումար նիստ, որոնցից առաջինում զեկուցումներով հանդես եկան Վլադիմիր Բարխուդարյանն ու Ռիչարդ Նովիանինսկայանը, իսկ վերջինում՝ մասնաճյուղերի և կլոր սեղանների ղեկավարները ներկայացրեցին հնգօրյա քննարկումների արդյունքները:

Պատմության մասնաճյուղն ամենաընդգրկունն էր, քանի որ բաղկացած էր բուն պատմության և նրան հարող օժանդակ գիտություններին վերաբերող մի քանի ենթամասնաճյուղերից (Մեպագիր քաղաքակրթությունների, Նագիպության, Ազգագրության և սոցիալական հարցերի, Ժողովրդագրության, Աղբյուրագիտության): Այս մասնաճյուղում Եկեղեցու պատմական դերին առնչվող զեկուցումներից կարելի է առանձնացնել ակադ. Նր. Բարթիկյանի («Նայագիպության-բյուզանդագիտության փոխադարձ առնչություններ»), Նարոտյուն վրդ. Պարիկյանի («Միսիոնարյան միաբանության ներդրումը հայագիտական մարզին մեջ»), Վ. Դիլոյանի («Միմեոն Կաթողիկոս Երևանցու րեղը և դերը հայ քաղաքական մտքի պատմության մեջ»), Ի. Օմեի («Կաթողիկոս Ներսես Շնորհալու (կթղ. 1166-1173 թթ.) նամակագրությունը հույների հետ»), Ֆ. Բաբայանի («Ուշիի Ս. Սարգիս վանքի պեղումները»), Ռ. Վարդանյանի («Նայոց քրմարական քրոնագուցային եղանակները և հայ հին մատենագրության հիմնահարցերը»), Վ. Գրիգորյանի («Կաթողիկոսական դիվանի փաստաթղթերի գիտական արժեքը և նրանց ուսումնասիրման հեռանկարները»), Միշել Վան Էսթրոկի («Սահակ Չորափորեցի և Սահակ Մոռթ») զեկուցումները:

Բանասիրության մասնաճյուղի նիստերն ամբողջացան լեզվի և գրականության ենթամասնաճյուղերի աշխատանքով: Այսպես լաված զեկուցումներից կարելի է առանձնացնել Զ. Գրեպինի («Նոր հայտնաբերված «Բառք Գաղիանոսի»»), Ն. Կասպիլյոյի («Գրիգոր Նագիանգացու աշխատությունների անանուն հայերեն թարգմանության բնութագրումը»), Նր. Թամրազյանի («Նարեկագիտություն. վիճակը և խնդիրները»), Ա. Օրենգոյի («Դյումեզիլի եռամաս համակարգը և հայ մշակույթը»), Զ. Տեր-Դավթյանի (««Բանք իմաստասիրաց» ժողովածուները հայ միջնադարյան գրականության մեջ»), Թ. Վան Լինսի («Պոեզիան և ինքնությունը. Գրիգորիս Աթոմարցու օրինակը»), Վ. Ներսիսյանի («Նայ միջնադարյան քնարերգության փայլաբանական հատկանիշները»), Վ. Կալցոլարիի («Նայ քրիստոնյաների պարականոն գրականությունը») զեկուցումները:

Մշակույթի մասնաճյուղի նիստերն ամբողջացան փիլիսոփայության և արվեստագիտության ենթամասնաճյուղերի աշխատանքով: Այսպես լաված զեկուցումներից Եկեղեցու թեմափիլային մոտ էին Ն. Բուշաուզենի («Ավետարանական բաժանումների համակարգի քննությունը Ժ դարի հայկական Ավետարաններում»), Ա. Ղազարյանի («Է-Ժ-Ժ դարերի հայկական և վրացական եկեղեցիների արտաքին կամարաշարը»), Ա. Արևշատյանի («Վկայաբանություն և շարականագրություն»), Ա. Բաղդասարյանի («Շարականների կերպարային բովանդակության մասին»), Ն. Պերրոյանի («Մաչի գաղափարաբանությունն ու պատմությունը վաղքրիստոնեական Նայաստանում»), Ա. Տեր-Մինասյանի («Վաղմիջնադարյան Նայաստանի կենտրոնագմբեթ եկեղեցիների ճարտարապետական հորինվածքների ձևավորումը»), Մ. Բաջի («Նայ ուխտավորը Իսրայելում. Լուկկայի Ս. Դավիթոսի պաշտամունքն ու պարկերագրությունը»), Դ. Զերթմենջյանի («Մշակութային փոխազդեցությունները հայկական եկեղեցաշինության մեջ») զեկուցումները:

Համաժողովի մասնաճյուղերից մեկն անվանված էր «Հայոց Եկեղեցին և հայագիտությունը»: Ըստ Ծրագրի այսպիսի ներառված էր 20 զեկուցում, որոնցից 18-ն ընթերցվեցին: Զեկուցումները վերաբերում էին Հայոց Եկեղեցու պատմությանը, ստեղծած մշակութային արժեքներին, Ծիսական գրքերին ու Վարդապետությանը:

Հայոց Եկեղեցու պատմության հարցերը քննարկվեցին Էմմա Կոստանդյանի («Մաղաքիա Օրմանյանի պատմագիտական հայացքները»), Ազատ Բոգոյանի («Հայոց Եկեղեցու պատմության հեղափոխության խնդիրների շուրջ (վավերագիտական ցանկեր)»), Իրինա Գայուկի («Հայոց Եկեղեցու ձևավորման հիմնական բնութագրերը»), Մաքսիմ Եվադյանի («Հայաստանի քրիստոնեացումը. վերադարձ դեպի աղբյուրները»), Նինո Ապցխաուրի («Վրացիների դարձի խնդիրները հայկական «Ցայսմաուրե»-ի «Ս. Նինոյի վարքի» խմբագրություններում») զեկուցումների մեջ: Վերջին երկու զեկուցումների հեղինակներն աղբյուրագիտական լայն հենքի վրա փորձում էին դասակարգել Հայաստանի և Վրաստանի դարձի մասին պատմող բազմալեզու սկզբնաղբյուրները և խնդիր դնում պատմագրության առջև՝ վերանայել որոշ ավանդական պատկերացումներ:

Իրինա Գայուկն իր ելույթում նպատակ էր դրել ներկայացնել Հայոց ինքնուրույն Եկեղեցու ձևավորման գործընթացը և ցույց տալ վերջինիս դերը Ուկրաինայում՝ մինչև Կաթոլիկ Եկեղեցու հետ միաձուլումը: Էմմա Կոստանդյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ հայ պատմագրության ամենանշանավոր դեմքերից մեկի՝ Մաղաքիա Պապրիարք Օրմանյանի բազմալեզու գիտական վաստակին և հեղինակի պատմագրական վաստակի գլուխգործոց հանդիսացող «Ազգապատում» աշխատության մեջ արձարծված մի շարք ազգային-եկեղեցական հիմնահարցերի: Հայոց Եկեղեցու վաղ շրջանի պատմության սկզբնաղբյուրներից մեկի՝ վավերագրերի ամբողջական ցանկերի ստեղծման և գիտական նկարագրության հարցերին էր նվիրել իր զեկուցումը Ա. Բոգոյանը:

Մշակույթին բերած Եկեղեցու ավանդի մասին խոսեցին Զավեն արքեպս. Չինչինյանը («Միսիթար Սեբաստացու կյանքն ու գործունեությունը»), Աբրահամ Տերյանը («Հայագիտություն առանց աստվածաբանության. վաղ հայկական իմաստասիրության խնդիրները»), Աշոտ Սյրեփանյանը («Հայոց աշխարհն ու համաշխարհային սրբությունները (Աստվածամոր առաջին պատկերագրման հարցի շուրջ)»), Վարդան Դևրիկյանը («Սուրբ Էջմիածնի պատկերագրությունը»):

Զավեն Սրբազանն ամենայն մանրամասնությամբ անդրադարձավ Միսիթար Սեբաստացու և նրա հիմնած միաբանության մշակութային վաստակին, ցույց տվեց Ս. Ղազարի միաբանների դերը նոր շրջանի հայագիտության ձևավորման գործում: Ա. Տերյանն էլ իր ելույթը նվիրել էր միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի կազմավորման գործում Եզնիկի «Եղծ աղանդոց» երկի խաղացած դերին: Վ. Դևրիկյանն անդրադարձավ Ս. Էջմիածնի գեղարվեստական ընկալմանը միջնադարյան պատմական ու գեղարվեստական սկզբնաղբյուրներում:

Ծիսագիտական խնդիրների և արարողական գրքերի հեղափոխությանն էին իրենց զեկուցումները նվիրել Արմենուհի Դրոստ-Աբգարյանը («Հայկական Շարակնոցում Աստվածահայրության կանոնները»), Գաբրիել Վինկլերը («Ակնարկ հայկական Պատարագամարտի պատմական ձևավորման ընթացքի»), Քրիստիան Հաննիկը («Հայ ծիսական հիմնեղբայրության փիլաբանությունը և դրա բյուզանդական առնչությունները»), Լուսիկ Սյրեփանյանը («Սուրբ Թեկղը արևելաքրիստոնեական Եկեղեցու սրբոհիների նախադի-

պար»), Կոդ Կոքսը («Բիրիական ուսումնասիրությունները և հայկական Աստվածաշունչը»):

Առաջին երկու գեկուցումները նվիրված էին միջնադարում Հայոց Եկեղեցու երկու կարևորագույն արարողական գրքերի՝ Շարակնոցի և Պատարագամատույցի կանոնակալանգման ու մեթոդային հետազոտության խնդիրներին: Զ. Հաննիկն իր ելույթը նվիրել էր բյուզանդա-հայկական ծիսական հիմնարկության համեմատության հիմնախնդիրներին: Կ. Կոքսը իր գեկուցման մեջ ի մի բերեց Աստվածաշունչի հրապարակման գործում վերջին տարիներին կատարված բնագրագիտական հետազոտությունները և խոսեց այդ կարևորագույն երկի լիակատար գիտական բնագրի կազմման հեռանկարների մասին:

Եկեղեցու վարդապետության հարցերը շոշափվեցին Արթուր Մաթևոսյանի («Նիկիոյ հանգանակը որպես հայ միջնադարյան աշխարհայացքի անկյունաքար»), Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի («Քաղկեդոնի ժողովը. պատմությունը, քրիստոսաբանական վեճերը և համաձայնության եզրերը»), Աբել քնն. Մանուկյանի («Ս. Թովմա Աբվինացու «Ընդդեմ Հայոց» թուղթը») գեկուցումներում: Մեսրոպ Սրբազանն իր ելույթում համակողմանիորեն ներկայացրեց Քաղկեդոնի ժողովի տեղը քրիստոսաբանական վեճերում և, անդրադառնալով Կաթողիկ, Ուղղափառ և Արևելյան Եկեղեցիների մեթոդային եկամունքի երկխոսություններին, արտահայտեց հետևյալ միտքը. «Եկեղեցիների մեջ համաձայնության հիմքը կկազմի այն նոր մտածումը կամ սկզբունքը՝ որ միևնույն ճշմարտությունը կարելի էր արտահայտել ոչ թե միակ բանաձևի մեջ, այլ մի բանի տարբեր բանաձևերով»:

Ա. Մաթևոսյանն իր ելույթում առանձնացրեց Նիկիայի ժողովի Հավատամքում ամրագրված միջնադարյան քրիստոնեության աշխարհաբանական չորս հիմնադրույթներն (Աստվածակենտրոնություն, Արարչապաշտություն, Անձնապաշտություն, Հայրությունապաշտություն) և ցույց տվեց դրանց տեղը հայ միջնադարյան գաղափարախոսության համակարգում: Աբել քահանան իր գեկուցման մեջ ունկնդիրներին ծանոթացրեց Թովմա Աբվինացու «De rationibus fidei» (1264 թ.) աշխատության մեջ պահպանված «Ընդդեմ Հայոց» թղթում արծարծված հարցերին և մեկնեց. «...հոգիներու փրկութեան վերաբերեալ երկու Եկեղեցիներու իրարից տարբերող ուղղութիւնները»:

Հայոց Եկեղեցու մեթոդային հրապարակային խնդիրներից մեկի շուրջն էր Գարեգին արք. Հարությունյանի գեկուցումը, որը վերնագրված էր «Հայաստանում Հայ Առաքելական Եկեղեցու կողմից իրագործվող երիտասարդության հոգեխնամության արդի հարացույցը և ապագայի հեռանկարները»: Գարեգին արքեպս. իր առջև խնդիր էր դրել՝ պարզել «երեխաներին ու պատանիներին՝ լիարժեք կերպով կյանք մտնելու և չափահասության մեջ առանց բարդությունների ինտեգրվելու» խնդիրները, որոնք կարևորվում են Հայոց եկեղեցական դաստիարակության տեսանկյունից:

Համաժողովն ամփոփող նիստում որոշվեց հրապարակել ընթերցված գեկուցումները: Հուսանք, որ համաժողովում արծարծված հարցերը նոր մտորումների ու հետազոտությունների կմղեն ապագայում:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր